ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 889-Ա « 05 » հունիսի 2026թ.

ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 146-րդ կետի պահանջները՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Գուրգեն Մարգարյանի անվան N 41 մանկապարտեզի հիմնանորոգման և բակի բարեկարգման աշխատանքները շահագործման ընդունելու նպատակով.

1.Ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Ա. Խեչիկյան	- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության շինարարական օբյեկտների ծրագրի ղեկավար /հանձնաժողովի նախագահ/
Հ. Գյումրյան	- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության շինարարական օբյեկտների ծրագրի պատասխանատու ինժեներ
«ԷԼԴՈԳԱՐ» ՍՊԸ տնօրեն Է. Էլյազյան	- Կապալառու կազմակերպություն
«ՎԱՀՐԱՄ ԿՆՅԱԶՅԱՆ» ԱՁ Վահրամ Կնյազյան	- Տեխնիկական հսկողություն իրականացնող
«ԷԼԶԱ ՓՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ տնօրեն Ռ. Հովնիկյան	- Հեղինակային հսկողություն իրականացնող

«Երևանի N 41 մսուր-մանկապարտեզ»
ՀՈԱԿ տնօրեն Լ. Առաքելյան - Շահագործող կազմակերպություն

2. Հանձնաժողովին՝ ստուգել կատարված աշխատանքների համապատասխանությունը հաստատված նախագծին, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին ու ստանդարտներին և կազմել աշխատանքների հանձնման – ընդունման ակտ:

3. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի վրա:

4. Սույն կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246